



# Փորձագիտական զեկույց



2016թ-ի ղեկտեմբեր ամսին Ալավերդի համայնքը հաղթող է ճանաչվել Եվրոպայի խորհրդի Լավագույն գործելակերպի ծրագրում՝ քաղաքացիական մասնակցություն անվանակարգում: Ծրագրի նպատակը ՏԻՄ կառավարման չափանիշների, ծառայությունների մատուցման, տեղական մակարդակում քաղաքացիների մասնակցության խթանումն էր: Օրիուս կենտրոնի առաջարկած մեթոդով եւ գաղափարով, կենտրոնի կամավորների, «Նոր Ալավերդի» հկ-ի եւ ՏԻՄ-ի համագործակցությամբ ներդրվել է համայնքի բնապահպանական քաղաքականության հիմքը՝ քաղաքացիների մասնակցությամբ: Բնապահպանական մշակույթի ու մոտեցումների բարելավման ուղղությամբ աշխատանքները շարունակվում են:



- **2016թ. ղեկտեմբեր ամսին նախատեսվել է**

- ա/ հավաքագրել հանրային կարծիք, դասակարգել եւ ներկայացնել ՏԻՄ –ին համայնքի սոցիալ - տնտեսական զարգացման հնգամյա ռազմավարական ծրագրի նախագծի կազմման համար
- բ/ աջակցել ՏԻՄ –ին համայնքի սոցիալ - տնտեսական զարգացման հնգամյա ռազմավարական պլանի նախագծի հանրային քննարկման կազմակերպմանը
- գ/ կազմակերպել դասընթաց՝ կլիմայի փոփոխությունների եւ էներգիայնայողության թեմայով

\* Ալավերդի համայնքում 2016 թ-ի ղեկտեմբեր ամսին նախատեսված աշխատանքի թիրախը հանդիսացել է «Ալավերդու սոցիալ - տնտեսական զարգացման հնգամյա ռազմավարական պլան»-ի նախագծի կազմումը: Պաշտպանելով Օրիուսի կոնվենցիայի համապատասխանությունը քաղաքացետարանի բնապահպանական քաղաքականության ուղրտներում, Օրիուս կենտրոնը ձեռնամուխ է եղել հանրային կարծիքի հավաքագրման,

այդպիսով հասարակությանը ներգրավելով համայնքի համար կարևորագույն փաստաթղթի ձեւավորման դեռեւս նախնական փուլին, դրանց դասակարգման, տեղեկատվության պատշաճ տարածման եւ տրամադրման գործին: Կենտրոնը հետևողականորեն, եւ ակտիվ մասնակցել է ռազմավարական հնգամյա ծրագրի նախագծի համար անցկացվող հանրային քննարկմանը, մշակել ու ներկայացրել առաջարկներ, որոնք ներառվել են: Այն համայնքի հանրությանը կներկայացվի քաղաքապետին կից ստեղծված հանձնաժողովի կողմից վերջնական տարբերակը ներկայացնելուց հետո, որի կազմում է նաեւ Օրհուս կենտրոնը:

### Արդյունքում՝

«Ալավերդի համայնքի 2017-2021թթ. սոցիալ տնտեսական զարգացման ռազմավարական ծրագրի նախագիծը» պատրաստ է ներկայացնելու հանրային քննարկման

\* Կազմակերպվել է հանրային քննարկում, որտեղ ներկայացվել է համայնքի հնգամյա՝ 2017-2021 թթ.. ռազմավարական ծրագրի նոր մեթոդաբանությամբ կազմված նախագիծը: Հնչել են առաջարկություններ, կարծիքներ, մեկնաբանություններ, բարձրացվել են հարցեր: Նախագծում կատարվել են որոշակի փոփոխություններ՝ քաղաքաշինության եւ կապիտալ ծրագրերի հետ կապված:

### Արդյունքում՝

Փոփոխություններից եւ շտկումներից հետո այն կներկայացվի համայնքի ավագանու հաստատմանը:



\* Ալավերդու Օրհուս կենտրոնը շրջակա միջավայրի կառավարման, կլիմայի փոփոխությունների մեղմման ու կայուն զարգացման ուղղությամբ ՏԻՄ-ին առաջարկել է Սյունիքի մարզի լավագույն փորձը կիրառել նաեւ Ալավերդիում: Այդ նպատակով կազմակերպվել է սեմինար հանդիպում: Հայաստանի վերականգնող էներգետիկայի եւ էներգախնայողության հիմնադրամը ԵԱՀԿ-ի պատվերով ՀՀ Սյունիքի մարզում իրականացված ծրագիրը որպես լավագույն օրինակ ներկայացրեց Օրհուս կենտրոնում, որին մասնակցում էին Ալավերդու քաղաքապետը, տարբեր հիմնարկների ու բիզնես ոլորտի ներկայացուցիչներ:

### Արդյունքում՝

Հանդիպումից անմիջապես հետո Ալավերդու քաղաքապետի եւ հիմնադրամի հետ ձեռքբերվեց պայմանավորվածություն 2017թ հունվարից կատարել համայնքի էներգոառողիտ, որից հետո համայնքում կներդրվի ֆոտովոլտայիկ կայաններ, էներգախնայող նորագույն մեթոդները Ալավերդիում կիրառելու համար: Օրհուս կենտրոնը շնորհակալության արժանացավ արդյունավետ առաջարկության համար:



\* Ալավերդու Օրհուս կենտրոնը մասնակցել է կոնֆերանսների.

- Դեկտեմբերի 2-ին, ԵԱՀԿ երևանյան գրասենյակի նախաձեռնությամբ, ՀՀ բնապահպանության նախարարության և «Տնտեսաիրավական վերլուծությունների կենտրոն» ՀԿ համագործակցությամբ տեղի ունեցավ աշխատաժողով՝ նվիրված ազգային օրենսդրությունում Օրհուսի կոնվենցիայի հիմնադրությունների արտացոլմանը և այդ համատեքստում շրջակա միջավայրի հարցերով արդարադատության մատչելիությանը:

- Դեկտեմբերի 12-ին, ՀՀ բնապահպանության նախարարության, ԵԱՀԿ երևանյան գրասենյակի և ԵՊՀ-ում գործող Կայուն զարգացման կենտրոնի կողմից կազմակերպվել էր «Էկոլոգիական քաղաքականության բարելավման և կանաչ տնտեսության զարգացման խնդիրները հանքային և ջրային ռեսուրսների շահագործման ոլորտում» խորագրով աշխատաժողովը:
- Դեկտեմբերի 13-14-ին, ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության նախաձեռնությամբ, ՄԱԿ-ի աղետների ռիսկի նվազեցման գրասենյակի հովանու ներքո և միջազգային գործընկերների աջակցությամբ՝ «Հանրային իրազեկումը՝ որպես աղետների ռիսկի նվազեցման և կայուն զարգացման անկյունաքար» միջազգային 4-րդ համաժողովն էր:

Կոնֆերանսների մասին հանդիպումների եւ խորհրդակցությունների միջոցով տեղեկատվությունը տարածվել է ՏԻՄ-ում, կենտրոնի փորձագետների խորհրդին եւ այլ շահագրգիռ շրջանակներում:

## 2016 թ Մեպտեմբեր-Դեկտեմբեր ամիսների

### փորձագիտական աշխատանքի արդյունքներ

- 2017 թ Ալավերդի համայնքի բյուջեի կազմման նախնական փուլից սկսած մասնակցություն, խորհրդատվություն բնապահպանական եւ առողջապահական ծրագրերի կազմման պրոցեսում, հանրության ներգրավման եւ հանրային քննարկման աջակցություն



- 2017-2021 թթ.. Ալավերդու սոցիալ - տնտեսական զարգացման հնգամյա ռազմավարական զարգացման ծրագրի կազմման հանձնաժողովի կազմում ընդգրկում, տեղեկատվության տարածում, հասարակության ներգրավում հարցումների եւ հանդիպումների միջոցով



- ՀՀ կառավարությունը Ալավերդու պղնձաձուլական գործարանի 2012թ հոկտեմբերին տրված արտանետումների թույլտվության սահմանված ժամանակավոր չափականակները եւս 5 տարով երկարաձգելու հարցին բացասական պատասխան է տվել՝ հաշվի առնելով շահագրգիռ գերատեսչությունների կարծիքները եւ հարցի հասարակական մեծ հնչեղությունը: Այսպիսով, նկատի ունենալով հարցի հույժ կարեւորությունը, ՀՀ կառավարությունը մերժել է «Էյ Սի Փի» ընկերության կողմից եւս 5 տարով աղտոտման չափանիշների փոփոխությունն ու բնապահպանական փոքր վճարներումները: Այս հարցում մեծ եւ կառուցողական է եղել Օրիոս կենտրոնի դերը:

Օրհուս կենտրոնը ՏԻՄ-ին, հկ-ներին, հասարակության լայն շրջակներին, ՁԼՄ-ներին տրամադրել է վերլուծական եւ փաստարկներով հիմնավորված համապատասխան տեղեկատվական փաստաթղթեր, անկախ փորձագիտական եզրակացություններ: ՀՀ վարչապետի հանձնարարականով կազմակերպվել են քննարկումներ, ինչի արդյունքում պատրաստվել են արձանագրություններ եւ նամակներ Օրհուս կենտրոնի աջակցությամբ, արդյունքները ներկայացվել են կառավարություն՝ խնդրին հստակ եւ կոնկրետ լուծում տալու նպատակով:

- Հայաստանի վերականգնող էներգետիկայի եւ էներգախնայողության հիմնադրամը ԵԱՀԿ-ի պատվերով ՀՀ Սյունիքի մարզում իրականացված ծրագիրը որպես լավագույն փորձի օրինակ 2017 – ին կիրականացվի Ալավերդիում: Նախաձեռնությունը եւ առաջարկությունը ՏԻՄ-ին կատարվել է Օրհուս կենտրոնի կողմից: Ալավերդու քաղաքապետի եւ հիմնադրամի հետ ձեռքբերվել է պայմանավորվածություն՝ 2017թ հունվար ամսից կատարել համայնքի էներգաուղիտ, որից հետո համայնքում կներդրվի ֆոտովոլտայիկ կայաններ, արեւային էներգիան օգտագործելու եւ էներգախնայող նորագույն մեթոդներ:

\* Հաշվետու 4 ամիսների ընթացքում կազմակերպված աշխատանքները՝ հանդիպումներ, խորհրդատվություններ, առաջարկություններ, եւ մասնակցություն այլ միջոցառումներ, որոնց վերաբերյալ նյութերը տարածվել եւ լուսաբանվել են սոցիալական կայքերի եւ ՁԼՄ-ների միջոցով:

**Անուշ Էվոյան**  
**ԵԱՀԿ բնապահպանական հարցերով փորձագետ**  
**E:mail – [anushevoyan@rambler.ru](mailto:anushevoyan@rambler.ru)**  
**Ալավերդու Օրհուս կենտրոն**  
**Դեկտեմբեր 2016թ.**